

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ» ՍՈՑԻԱԼ-
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ	ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
Թեմա	«ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՅՈՒՋԵ» ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ
Հետազոտող՝	ՆԱՐԵ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍԻ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ԱՆՎԱՆ №1 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ
Ղեկավար՝	ՆՎԱՐԴ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ԳՈՐԻՍ 2023

«Ընտանեկան բյուջե» թեմայի դասավանդման մեթոդիկական իմ փորձից



Դասի թեման. «Ընտանեկան բյուջեի արդյունավետ կառուցման մեթոդներ»:

Ֆինանսապես գրագետ քաղաքացի լինելու համար պետք է իմանալ ընտանիքի բյուջեի եկամուտների և ծախսերի տարբերությունը: Հենց այս դասի շրջանակներում էլ մենք կձանոթանանք ընտանիքի բյուջեին, կնայենք ընտանիքի եկամտի տարբեր աղբյուրներին, ընտանիքի ծախսերի կառուցվածքին և կսովորենք, թե ինչպես կազմել ընտանեկան բյուջե:



Նոր գիտելիքների յուրացման փուլ

Դասի այս փուլում տեղի է ունենում աշակերտների և ուսուցչի միջև ճակատային զրույց նոր նյութի ուսումնասիրման վերաբերյալ

Հարց աշակերտներին

1. Ձեր տրամադրության տակ անձնական փող կա՞:
2. Կարո՞ղ եք նշել դրամական միջոցների հիմնական աղբյուրները:

Ուսուցիչ

Ընտանեկան տնտեսության կազմակերպման ընդհանուր ընդունված ձևը ընտանեկան բյուջեն է, որը կազմում է ընտանիքի եկամուտների ձևավորումը, դրանց օգտագործումը, եկամուտների և ծախսերի համակարգումը: Բայց ընտանիքում կարևոր է գումարները ճիշտ և արդյունավետ ծախսել: Անհրաժեշտ է, որ

յուրաքանչյուր ընտանիք իմանա, թե ինչպես ճիշտ բաշխել իր բյուջեն: Բոլորը պետք է իմանան տնային հաշվառման հիմունքները: Ընտանեկան բյուջեն ընտանիքի եկամուտների և ծախսերի կարգավորման ծրագիր է, որը սովորաբար կազմվում է մեկ ամսվա համար: Ընտանեկան ծախսերը հիմնականում կարելի է բաժանել երկու խմբի մշտական և ոչ մշտական: Կարող են լինել նաև հրատապ ծախսեր, երկարաժամկետ ծախսեր:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Մշտական

Ոչ մշտական

ԾԱԽՍԵՐ

Մշտական

Ոչ մշտական

Հրատապ

Երկարաժամկետ

Հարց աշակերտներին

Ձեր կարծիքով, ի՞նչ ծախսեր կարող ենք մշտական անվանել: (տղաների կարծիքները)

Օրինակներ բերեք մշտական ծախսերի անձնական կյանքի փորձից: (տղաների կարծիքները)

Ի՞նչ ծախսեր կան՝ որպես ոչ մշտական (տղաների կարծիքները):

Ո՞րն է տարբերությունը մշտական և ոչ մշտական ծախսերի միջև: (տղաների կարծիքները)

ԸՆՏԱՆԵՎԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՕՐԻՆԱԿ			
Եկամուտներ (ՀՀ դրամ)	Օգուտ .	Մեկուտ .	Հոկոտ .
Աշխատավարձ	42.000	42.000	42.000
Դրամական փոխանցում	70.000	-	-
Կենսաթոշակ	38.000	38.000	38.000
Վաճառքից գուտ շահույթ	-	900.000	240.000
Համախառն եկամուտ	150.000	980.000	320.000
Հաշվեկշիռ (ՀՀ դրամ)	Օգուտ .	Մեկուտ .	Հոկոտ .
Պարտք	-154.500		-116.500
Խնայողություն		+245.500	

Ծախսեր (22 դրամ)	Օգոստ.	Մեկտ.	Հոկտ.
Մուտք և հիգիենա	53.000	72.000	80.000
Վտելիք	18.000	36.000	18.000
Հագուստ և գր. պիտույքներ	80.000	0	24.500
Կոմունալ ծախսեր	29.500	34.000	38.000
Առողջություն	12.000	24.000	248.000
Երեխաներ	47.000	54.000	51.000
Կենցաղային տեխնիկա	-	450.000	-
Վարկ	60.000	60.000	60.000
Այլ ծախսեր	5.000	4.500	8.000
Համախառն ծախսեր	304.500	734.500	527.500

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ. 6 ՏԱՐԱՆԵՐԻ ՄԵԹՈՂԸ

Ինչպե՞ս ճիշտ բաշխել ընտանեկան բյուջեն, ինչպե՞ս սովորել գումար տնտեսել:

Ամենափորձված ու գործող տարբերակներից մեկը 6 տարաների մեթոդն է:

Ամենակարևոր խորհուրդը, որ տալիս են ընտանիքներին, սովորաբար ստացած եկամտից քիչ ծախսելու խորհուրդն է, քանի որ հենց չպլանավորված ծախսերն են, որ կարող են անհարմար իրավիճակի մեջ դնել մեզ ու կանգնեցնել փաստի առաջ:

Ամսական բյուջեն հարկավոր է բաժանել 6 մասի՝ 6 տարաների, որոնցից յուրաքանչյուրը նախատեսված կլինի որոշակի ծախսերի համար: Ահա թե ինչպես է գործում այս մեթոդը:



1-ԻՆ ՏԱՐԱ. ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾԱԽՍԵՐ

(բյուջեի 55%-ը)

Այստեղ ներառվում են ընտանիքի հիմնական ծախսերը՝ սննդի, կոմունալ վճարումների, ինտերնետի, տան վարձի, տրանսպորտի, բուժման ու վարկերի գումարը: Այս ծախսերը շատ դժվար է կրճատել, այնպես որ, փորձեք գոնե չավելացնել դրանք, չվերցնել նոր վարկեր և այլն: Եվ իհարկե, խոստացեք ձեզ այս տարայից ոչ մի դեպքում գումար «պարտք» չվերցնել:

2-ՐԴ ՏԱՐԱ. ԺԱՄԱՆՑԻ ԾԱԽՍԵՐ

(բյուջեի 10%-ը)

Այս տարայի գումարը անհրաժեշտ է ինքներդ ձեզ «երես տալու» համար: Այն նախատեսված է, օրինակ, ձեր սիրելի ընկերիքը կամ հավանած արքեսուարը գնելու համար, թատրոն ու կինո գնալու համար: Այս գումարը դուք կարող եք տնօրինել այնպես, ինչպես կցանկանաք:

3-ՐԴ ՏԱՐԱ. ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(բյուջեի 10%-ը)

Սա ձեր ընտանիքի «ետ գցած» գումարն է, որը հարկավոր է ներդնել ինչ-որ բանի մեջ, որը ձեզ լրացուցիչ եկամուտ կարող է բերել: Այս գումարը դուք չպետք է ծախսեք, մինչև չունենաք նրանից ստացված եկամուտ: Օրինակ, կարող եք ներդնել ավանդի տեսքով և ծախսել ստացված տոկոսները: Բայց այս դեպքում էլ դուք կծախսեք ոչ թե իննայած գումարը, այլ նրա միջոցով վաստակած եկամուտը:

4-ՐԴ ՏԱՐԱ. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

(բյուջեի 10%-ը)

Այս տարայի գումարը նախատեսված է ինչպես ձեր երեխաների, այնպես էլ ձեր կրթության և ինքնակատարելագործման համար՝ գրքեր, սեմինարներ ու թրեյնինգներ, օտար լեզվի կուրսեր: Ինքներդ ձեր մեջ ներդրում անելով՝ դուք ոչ միայն ինքնակատարելագործվում եք, այլև բարձրացնում եք ձեր գինը՝ իբրև մասնագետ:

5-ՐԴ ՏԱՐԱ. ՆՎԵՐՆԵՐ

(բյուջեի 5%-ը)

Օգտագործեք այս տարայի գումարները հարազատների ու ընկերների համար նվերներ գնելու կամ բարեգործության համար: Սակայն փորձեք այս գումարը

չծախսել ինքներդ ձեզ համար նվեր գնելու համար: Դուք միշտ կծախսեք ավելին, և մտերիմների նվերների վրա ստիպված կլինեք խնայել:

6-ԲԴ ՏԱՐԱ. ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ

(բյուջեի 10%-ը)

Այստեղ պետք է պահել այն գումարը, որը դուք կարող եք ծախսել խոշոր գնումների վրա՝ խնայելով մի քանի ամիս, օրինակ՝ մեքենա, կենցաղային տեխնիկա գնելու կամ ճամփորդության մեկնելու համար: Ամեն ամիս դուք պետք է այս տարայի մեջ մի փոքր ներդրում անեք: Այս տարան ոչ միայն ձեզ ապահովության զգացում կտա վաղվա օրվա հետ կապված, այլև կիրականացնի ձեր երազանքները:

Տարաների մեթոդի կիրառման հիմնական սկզբունքն այն է, որ դուք իրավունք չունեք տարաներից մեկից գումար վերցնել մյուսի համար: Դուք պետք է տվյալ ամսվա համար սամանափակվեք ուրաքանչյուր տարայի գումարով:

Հաճախ մենք ինքներս մեզ համոզում ենք, որ այդ պահի մեր քմահաճույքը իսկապես անհրաժեշտ է, որպեսզի մենք մեզ երջանիկ զգանք, իսկ կյանքը միապաղաղ ու անհետաքրքիր չլինի և հույս ենք տալիս մեզ, որ այս ծախսը էական դեր չի խաղա ու գումարը կհերիքի: Բայց որպես կանոն այդ քմահաճույքները երբեք չեն ավարտվում, հներին պարզապես նորերն են գալիս փոխարինելու: Արդյունքում գումարը միշտ չի հերիքում:

Այնպես որ, հաշվեք ամսական ձեր բյուջեն ու տեղավորեք դրանք 6 հրաշագործ տարաների մեջ:

Ֆինանսական կրթություն

- Մշտական և ոչ մշտական եկամուտներ ու ծախսեր, առաջնահերթությունների որոշում:



Գիտելիք

- Հասկանա, թե ինչպիսի ծախսեր է կատարում ընտանիքը, և որ դրանք կարող են լինել մշտական (հաստատուն, օրինակ՝ սնունդ, կոմունալ վճարներ և այլն) կամ ոչ մշտական (փոփոխուն, օրինակ՝ հագուստ, տոներ, կահույք, հանգիստ և այլն):
- Հասկանա, որ ընտանեկան ծախսերը դասակարգվում են՝ ըստ առաջնահերթության:

- Հասկանա՝ եկամտի աղբյուրները և որ դրանք կարող են լինել մշտական (օրինակ՝ աշխատավարձ, կենսաթոշակ և այլն) կամ ոչ մշտական (օրինակ՝ սեզոնային աշխատանք, նվիրատվություն և այլն):
- Հասկանա, թե ինչպես կարելի է հաշվել ընտանեկան ծախսերը և եկամուտները:
- Հասկանա, որ ընտանեկան բյուջեն ընտանիքի բոլոր անդամների ծախսերի և եկամուտների համադրումն է:
- Հասկանա անձնական և ընտանեկան բյուջեների տարբերությունները (օրինակ՝ ծնողի տված գումարը իր համար եկամուտ է, իր կատարած ծախսը ծախս է նաև ընտանիքի համար):

Հմտություններ

- Կարողանա հավաքել տվյալներ և կազմել պարզ ընտանեկան բյուջե՝ օգտագործելով աղյուսակներ:
- Կարողանա համադրել եկամուտները և ծախսերը (հաշվեկշռի գաղափարը):
- Կարողանա դասակարգել հիմնական եկամուտների աղբյուրները և ծախսերի տեսակները (հաստատուն/փոփոխուն, առաջնահերթ/երկրորդային):
- Կարողանա մասնակցել ընտանեկան բյուջեի՝ իրեն վերաբերող մասի կազմմանը, համադրելով իր անձնական բյուջեի տվյալները ընտանեկան բյուջեի համապատասխան տվյալների հետ:

Վերաբերմունք

- Գիտակցի բյուջե կազմելու կարևորությունը՝ ունեցած փողը վերահսկելու համար:
- Կարևորի կարիքների առաջնահերթությունը ցանկությունների նկատմամբ:
- Կարևորի իր անձնական եկամուտների բաշխումը՝ հաշվի առնելով ապագա ծախսերը և դրանց առաջնահերթությունը:
- Գիտակցի, որ բյուջեում պետք է նախատեսել առանձին հատկացում խնայողության համար:
- Կարևորի իր անձնական բյուջեի տվյալների դերը ընտանեկան բյուջեի մեջ:
- Կարևորի եկամուտների ու ծախսերի պլանավորումը:

Դասի ընթացքի նկարագրություն և ցուցումներ

- Դասի թեմայի և նպատակների ներկայացում
- Ձևակերպել ինչ է բյուջեն:
- Մանրամասնել, թե ինչպիսի ծախսերից և եկամուտներից կարող է կազմված լինել բյուջեն: Բերել օրինակներ: Օգնել և խրախուսել աշակերտներին, ինքնուրույն մտածել, առաջադրել հարցեր և պատասխանել դրանց:
- Դասակարգել ծախսերի և եկամուտների տեսակները: Որոնք են առաջնահերթությունները:

Դասի ընթացքը.

Դասն առաջարկվում է անցկացնել խմբային աշխատանքի մեթոդով: Այդ նպատակով աշակերտներին նախապես պետք է բաժանել խմբերի:

Առաջադրանք 1. Ստեղծեք ձեր անձնական բյուջեի աղյուսակը (կառուցվածքը), որը հաշվի կառնի ամսական բոլոր եկամուտներն ու ծախսերը: Այս աղյուսակն այսպիսի տեսք կունենա:

Առաջադրանք 2. Ուշադիր դիտարկեք (և գրեք աղյուսակում) ձեր եկամտի բոլոր աղբյուրները, այնուհետև հաշվարկեք ամսական ընդհանուր եկամուտը: Պարզ հաշվարկները թույլ կտան հասկանալ, թե ամսական որքան գումար կարող եք ծախսել որոշակի բաների վրա:

Առաջադրանք 3. Գրեք, թե ամսական որքան գումար կծախսվի պարտադիր վճարների և օրական ծախսերի վրա: Բոլոր հաշիվները և բոլոր գնումները վճարելուց հետո հաշվարկեք, թե իրականում որքան եք ծախսել: Դա այն ժամանակն է, երբ ձեզ համար վերջնականապես պարզ է դառնում, թե իրականում որքան արժե ձեզ և ձեր ընտանիքին կյանքի մեկ ամիսը: Եվ որպեսզի ծախսերի բաժինը ներառի բացարձակապես ամսական բոլոր ծախսերը (նույնիսկ այնպիսի «անտեսանելի», ինչպիսին է սպորտային կոշիկ կամ կրակայրիչ գնելը), ամեն օր հետևեք ծախսերին:

Առաջադրանք 4. Ամսվա վերջում, բոլոր հաշվարկներից հետո, սթափ գնահատեք ձեր բոլոր եկամուտներն ու ծախսերը: Սա թույլ կտա հասկանալ,

թե որքան է անհրաժեշտ եկամուտը, օրինակ՝ ամսական պարտադիր վճարումները մարելու համար, և որքան կարող եք հետաձգել, ասենք, ամանորյա խնջույքի համար: Եթե աղյուսակը լրացնելուց հետո տեսնեք, որ ծախսերը գերազանցում են եկամուտը, ուշադիր վերլուծեք առաջացած իրավիճակը. Ինչից կարելի էր հրաժարվել, ինչը ավելի էժան գնել:

Պատասխանեք հարցերին. Արդյո՞ք արդյունավետ եք ծախսում ձեր գումարը: Ձեր եկամուտը մեծացնելու հնարավորություն կա՞: Կրճատե՞լ ձեր ծախսերը:

Աշխատանք պաստառներով

Առանձին պաստառների վրա խմբերի աշակերտները կգրեն

- *մշտական,*
- *ոչ մշտական,*
- *հրատապ,*
- *երկարաժամկետ*

ծախսերի օրինակներ:

Այնուհետև կհամարակալեն դրանք

- *ըստ առաջնահերթությունների,*
- *կմատնանշեն կարիք և ցանկություն հասկացությունների տարբերությունը:*
- *Առաջադրանքների մեկնաբանում և կատարում,*
- *Ամփոփում և գնահատում,*

Եզրակացություն.

Ամփոփելով եկանք այն եզրահանգմանը, որ ժամանակակից մարդը պարզապես պարտավոր է ֆինանսապես գրագետ լինի, որ ոչ միայն կարողանա խնայել ընտանեկան բյուջեն, այլև արգապես զարգացնի առկա միջոցները գրագետ կառավարելու կարողությունը: Հետեւաբար, պետք է սովորել, թե ինչպես ճիշտ բաշխել միջոցները առանց արմատական սահմանափակումների ընտանիքի անդամների համար:

